## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ musalerhamayng@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մայիսի 2020 թվականի N 13

## ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 04-069-0015-0012 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի բաժանման հատակագծի առանձնացվող 0,0177 հա հատվածին տալ հետևյալ հասցեավորումը՝ Լուի Դարթիժ դյու Ֆուրնեի փողոց, թիվ 4/1, իսկ մյուս՝ 0.0626 հա հատվածի հասցեն թողնել նույնը՝ Լուի Դարթիժ դյու Ֆուրնեի փողոց, թիվ 4:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, մայիսի 7
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ու Մ

«07» մայիսի 2020 թվականի N 14

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2020թ. մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» N 298-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 01.04.2020թ. թիվ 01/9/01876-2020 գրությունը՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի «Մուսալեռի բուժական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ին անհատական պաշտպանական պրտահագուստներով ապահովելու համար տրամադրել 82500 /ութսուներկու հազար հինգ հարյուր/ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, մայիսի 7
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» մայիսի 2020 թվականի N 15

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 111-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. Մայիսյան եռատոնի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի զոհված ազատամարտիկների գերեզմանատանը զոհվածների հիշատակին հարգանքի տուրք մատուցելու նպատակով պսակ և ծաղիկներ ձեռք բերելու համար տրամադրել 20000 /քսան հազար/ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվական, մայիսի 7
գ. Մուսալեռ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ**
**ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» մայիսի 2020 թվականի N 16

## ԱՐՄԻՆԵ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 154-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացի Արմինե Սերյոժայի Շահումյանի նկատմամբ նկատմամբ կիրառել վարչական տուգանք՝ իր կողմից իրեն սեփականատիրության իրավունքով պատկանող համայնքի Լուի Դարթիժ դյու Ֆուրնեի փողոցի թիվ 36/1 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիրը՝ 04-069-0014-0079) բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում կատարվող ինքնակամ շինանարության իրականացման համար՝ նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:
2. Տուգանքի վճարումը իրականացնել սույն որոշումը խախտողին հանձնելուց ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ Մուսալեռ համայնքի բյուջե՝ 900325176296 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, մայիսի 13
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» մայիսի 2020 թվականի N 17

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 111-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի զբոսայգու, մանկապարտեզի տարածքի, ֆուտբոլային հրապարակի և համայնքապետարանի տարածքի խոտածածկի քաղման աշխատանքների համար տրամադրել 109 000 /մեկ հարյուր ինը հազար/ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվական, մայիսի 13
գ. Մուսալեռ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» մայիսի 2020 թվականի N 18

## ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի 14-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի բնակիչ Մերի Արամի Բարեղամյանի դիմումը և համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 18.05.2020թ. թիվ 1 արձանագրությունը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի բնակիչ Գագիկ Գրիգորի Մկրտչյանի /ծնված 14.09.1988թ./ նկատմամբ սահմանել պատրոնաժ՝ պատրոն նշանակելով քաղաքացի Մերի Արամի Բարեղամյանին:
2. Հսկողություն սահմանել Գագիկ Գրիգորի Մկրտչյանի նկատմամբ պատրոն նշանակված Մերի Արամի Բարեղամյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, մայիսի 19
գ. Մուսալեռ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
# ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ Տիրան Թերզյան 2/1
Էլ փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6 47 22

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մայիսի 2020 թվականի N 19

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի N10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի 2020 թվականի ապրիլի 2-ի «Հասցե-համարանիշ տալու մասին» N10 որոշման 1-ին կետում «38/1» թվերը փոխարինել «38/2» թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, մայիսի 20
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» մայիսի 2020 թվականի N 20

## ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 111-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում՝
   1) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4216 / գույքի և սարքավորումների վարձակալություն / պակասեցնել 1500.0 հազար դրամ:
   2) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ ավելացնել 100.0 հազար դրամ:
   2) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4251 / շենքերի և կառույցների ընթացիկ վերանորոգում և պահպանում/ ավելացնել 1100.0 հազար դրամ:
   3) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4239 / ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ ավելացնել 300.0 հազար դրամ:

5) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4841 /բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների փոխհատուցում/ պակասեցնել 200.0 հազար դրամ:

6) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4251 / շենքերի և կառույցների ընթացիկ վերանորոգում և պահպանում/ ավելացնել 200.0 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվական, մայիսի 22

գ. Մուսալեռ